ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՏՈՔԹՈՐ ՐԱՊԸՐԹ ՈՒ. ՍԸՐԼ՝

Ծանոթ է ան ոչ՝ միայն ամերիկացիներուն, այլ նաև մեզի հայերուս։ Սիրելի է ան. նման հազվագյուտ անձերու, ոչ միայն իբրև անձ, նկարագիր ու իմացական շնորհներով օժտված մեկը, այլ նաև իբրև մին, որ այնքան գութով և քրիստոնեական սիրով կմոտենա մեր ազգային կյանքի իրադարձությանց։ Հարգելի տոքթոր Ռապըրթ Ու. Սըրլը տերունական և առաքելական պատվերին լավապես գիտակցողն է մեր այս քիչիկ մը նյութապաշտ և մեքենայացած աշխարհի մեջ. իրեն համար նավատ ու գործ անբաժան ըմբռնումներ են։ Կհավատա ճշմարտապես մեր Հայ դատին իրավության ու կգործե այդ իրավությունը և իրավունքը իրականացնելու լուրջ ճիգով։ Անմարան կըրնանք այժմ ըսել, որ ան գործոն ատենապետն է Հայ Իրավանց Պաշտպան Ամերիկյան Եկեղեցական Հանձնախումբին։

Ու անշուշտ որ շահեկան է մեզի համար՝ լսել զինք իր մտածումներուն մեջ։

«Աշխարհի բոլոր ժողովուրդներու մեջ հայերը հերոսական ոգիով տոգորված ազգ մըն են։ Արդարև, ո՛չ մեկ ժողովուրդ կրցած է տոկալ հալածանքներու՝ այդքան երկար ատեն։ Ո՛չ մեկ ժողովուրդ այնքան հոգեին հարած է քրիստոնեական հավատքին, որքան հայերը՝ նույնիսկ արհավիրքի ու տառապանքի մշտատև օրերուն։ Ու ո՛չ մեկ ժողովուրդ այնքան անգթորեն անիրավուած է, որքան հայերը՝ առաջին համաշխարհային պատերազմի հաջորդող տարիներուն։

Մեկզմեկու ետեւ, Ուիլսըն, Քլեմանսո, Լլոյտ Ճորճ, Պրիան և Պալֆուր, Անգլիո Համայնքներու Տունը, Իտալիո Երեսփոխաններու խորհուրդը, Միացյալ Նահանգաց Սերակուլտը և նույնիսկ ծերակուտական Լաճ— որ օրինագիծ մըն ալ ներկայացուց— հայտարարեցին, թե Հայկական հողերը վերադարձվելու են և Հայաստան ազատ երկիր հռչակվելու է։

Նախագահ Ուիլսըն հավատարմորեն կատարեց իր հանձնառությունը, սակայն առաջադրված հողերը երբեք չտրվեցան Հայաստանի, որովհետև հիշյալ համաձայնագիրը մեռյալ տառ մը դառնալու կոչված էր։ Մյուս կողմե թուրքերը գրավեցին Կարսն ու Արդահանը՝ ջարդելով բնակչությունը և տիրանալով լքյալ գույքերուն...։ Արևմտյան աշխարհի համար Հայկական հարցը թաղված էր...։ Հայաստանի մեկ տասներորդը միայն, իր մեկ միլիոնի մոտ բնակչությամբ, միացավ խորհրդային Սոցիալիստական Հանրապետություններու Միությանն։

Միացյալ Նահանգները, իբրև մեկ անդամը Միացյալ Ազգերու, պատեհությունը ունի վերարծարծելու Հայկական հարցը։ Քանի որ արդարություն պահանջվող հարց մըն է այս, և քանի որ հայոց կրած տառապանքներուն նախնական պատճառը իրենց քրիստոնյա ըլլալն էր, անտարակույս, Ամերիկայի քրիստոնյա եկեղեցիները իրենց ուժերը պիտի հայտնաբերեն ու միացնեն ի նպաստ Հայաստանի՝ հուսալով որ Ամերիկա ալ, իր կարգին, խնամյալ ձևով պիտի շատագովե Հայկական հարցի արդարությամբ լուծումը»։

(«Հայաստանեայց Եկեղեցի» *հունվար 1948 թ.*)